

Ամփոփ Հաշվետվություն


Մինչ աշխատանքներին անցնելու Հրազդանի Օրհու կենտրոնում տեղի ունեցավ փորձագետների խորհրդի նիստ,որտեղ հաստատվեց համակարգողների աշխատանքային ծրագիրը:

Մեպտեմբեր ամսին համակարգողի կողմից կատարվեց վերլուծություն մարզում առկա բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Պատրաստվեց 20 էջից բաղկացած հաշվետվություն՝ անտառային ռեսուրսների կայուն կառավարման, կենցաղային և շինարարական աղբի հեռացման, աղբավայրերի կանոնակարգված ձևով շահագործման խնդիրների, ջրային ռեսուրսների առավելարդյունավետ, նպատակաուղղված օգտագործման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների կազմակերպման, հանքարդյունաբերության ոլորտում օրինականության ապահովման, հողերի բերրի շերտի պահպանման և դեգրադացիայի կանխման, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցման, լեռնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտների պահպանման և արդյունավետ օգտագործման,կարմիր գրքում գրանցված կենդանիների և բուսատեսակների պահպանության,էկոկրթության ցածր մակարդակի, հասարակական կազմակերպությունների պասիվության,բնակչության իրազեկության ոչ բավարար աստիճանի, հողի, ջրի, օդի մշտական մոնիտորինգի վերաբերյալ:Հաշվետվության վերաբերյալ կազմակերպվեց հանրային քննարկում Հրազդանի Օրհու կենտրոնում, պատրաստված փաթեթը տրվեց մարզպետարանին:



Մեպտեմբեր ամսին բնապահպանության նախարարություն ուղղարկվեց հարցում՝ Կոտայքի մարզում գործող աղտոտման արտոնագիր ստացած ձեռնարկություններից պետրյուջե գանձվող բնօգտագործման և բնապահպանական վճարների ընդհանուր չափի մասին,2015-2016թթ. պետրյուջեից Կոտայքի մարզին տրվող

բնապահպանական ծախսերի մասին:Նշենք որ մարզում աղտոտման արտոնագիր ստացած ձեռնարկությունների թիվը 164-են:Պատասխան նամակը կցված է՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 100106008@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
☎ (374 11) 818 506

№ 5/07.1/53279
«24» «09» 2016թ.

Հրազդանի Օրիուս կենտրոնի
համակարգող Ժ.Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Ի պատասխան 2016թ. սեպտեմբերի 13-ի գրության, Ձեզ եմ տրամադրում Կոտայքի մարզում գործող, աղտոտման արտոնագիր ստացած ձեռնարկություններից պետքից բացելու քանակը և բնապահպանական վճարների չափի և 2015-2016թթ. պետքից բացելու մարզին տրվող բնապահպանական ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:


Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝



Խ.Աղաքելյան

Ա.Վարդանյան
011 818 517
Ա.Հարությունյան
011 818 503



ՏԵՂԵԿԱՆՔ


**Կոտայքի մարզում գործող՝ աղտոտման արտոնագիր ստացած
ձեռնարկություններից պետբյուջե գանձված բնօգտագործման և
բնապահպանական վճարների ընդհանուր չափի և համայնքին հատկացված
/հատկացվելիք/ սուբվենցիաների վերաբերյալ**

Համայնքի անվանումը	2015թ. փաստացի գանձված բնօգտագործման և բնապահպանական վճարների ընդհանուր չափը	2015թ. փաստացի տրամադրված սուբվենցիայի գումարը	2016թ. փաստացի գանձված բնօգտագործման և բնապահպանական վճարների ընդհանուր չափ	2016թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբվենցիայի գումարը
Ընդամենը Կոտայքի մարզ	2143.7	2226.5	___*	1214.6
1 ք.Հրազդան	0.0	1150	___*	0.0
2 ք.Չարենցավան	2143.7	374.5	___*	1214.6
3 ք.Ծաղկաձոր	0.0	702.0	___*	0.0

*2016թ. փաստացի գանձված բնօգտագործման և բնապահպանական վճարների ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվում է 2017թ. սկզբին:

Հոկտեմբեր ամսին շրջանառության մեջ դրվեց Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով վարակված տեղանքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կարավարման ծրագրիրը: Այդ նպատակով 2014-2018թթ. Ժամանակահատվածում ՀՀ-ում նախատեսվում էր Հրագրան քաղաքի հարևանությամբ, նախկին “Անձեռնամխելի պահեստների” տարածքում վերկառուցել վտանգավոր թափոնների պահեստավորման շինություն, որտեղ պետք է տեղափոխվեին Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից 900 տոննա թունաքիմիկատներ և 7100 տոննա խիստ աղտոտված հող:

Հոկտեմբերի 11-ին ՀՀ Բնապահպանության նախարարությունում տեղի ունեցավ հանրային քննարկում՝



Քննարկմանը մասնակցում էին Բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները, ԱԻՆ աշխատակիցներ, Հրագրանի Օրհուս կենտրոնի համակարգողները: Քննարկմանը հրավիրված էին հասարակական կազմակերպությունների նախաձեռնող խմբի անդամներ, ովքեր դիմել էին ՀՀ վարչապետին՝ պահանջելով շրջանառությունից հանել Կոտայքի մարզում վտանգավոր քիմիական թափոնների ազգային պահեստավորման և կառավարման կենտրոնի ստեղծման ծրագրիրը: Ծավալվեց է բուռն քննարկում, որտեղ բարձրացվեցին հարցեր ծրագրի վերաբերյալ : Նախարարի տեղակալն առաջարկեց ծրագրի յուրաքանչյուր փուլից առաջ կազմակերպել հանրային քննարկումներ՝ ներգրավելով հասարակական կազմակերպությունների մասնագիտական ներուժը, որպեսզի հստակեցվեն հետագա քայլերը՝ նպաստելով

ծրագրի արդյունավետության բարձրացմանը: Քննարկման վերաբերյալ Հրագրանի Օրհուս կենտրոնում կազմակերպվեց հանդիպում մարզպետարանի, քաղաքապետարանի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ներկայացվեց նախատեսվող ծրագիրը: Մասնակիցները հայտնեցին իրենց դիրքորոշումը: Նոյեմբերի 5-ին Հրագրանում տեղի ունեցավ հանրային քննարկում ,որին մասնակցում էին “civilvoice” հկ-ի փորձագետներ, ավագանու անդամները, Հրագրան հեռուստարևելությունը, մտավորականներ, Հրագրանի Օրհուս կենտրոնը: Հանրային քննարկումը կարող եք տեսնել հետևյալ հղումով (<https://www.youtube.com/watch?v=ZJGX8Vt9OkM>)

Նոյեմբերի 7-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցավ «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական ադտոտիչներով (ԿՕԱ) ադտոտված տարածքների ադտագերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ծրագրի կառավարման խորհրդի և խորհրդատվական կոմիտեների նիստ: Նիստի աշխատանքներին մասնակցում էին նաև խնդրի վերաբերյալ բարձրաձայնած հասարակական կազմակերպությունների և Հրագրան քաղաքի ներկայացուցիչները:



Բացելով նիստը՝ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը նշեց, որ հասարակական կազմակերպությունների հետ տեղի ունեցած նախորդ՝ հոկտեմբերի 11-ի քննարկման ժամանակ ձեռք էին բերվել պայմանավորվածություններ, որոնք կարիք ունենին վավերացման ծրագրի ղեկավար խորհրդի կողմից: Այս նպատակով արտահերթ կարգով նիստի օրակարգ է ընդգրկվել հասարակական կազմակերպությունների կողմից նախորդ քննարկումների ժամանակ բարձրացված խնդիրը, որն առնչվում էր Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից 7100 տոննա կայուն օրգանական

աղտոտիչներով աղտոտված հողի՝ Հրազդան քաղաքում նախատեսվող համապատասխան պահեստարան չտեղափոխելու հարցը: Ծրագրի ղեկավար խորհուրդը քվեարկությամբ որոշում կայացրեց չտեղափոխել 7100 տոննա աղտոտված հողը, այլ վնասագերծել տեղում:

Նոյեմբեր ամսին համակարգողի կողմից պատրաստվեց Կոտայքի Մարզի Սոցիալ-Տնտեսական Զարգացման Ծրագրի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ, որը տրամադրվեց մարզպետարան, որպեսզի ընդգրկվի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մեջ: Կից ներկայացված է այդ առաջարկությունների փաթեթը:

Անտառներ, կենսաբազմազանություն, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Անհրաժեշտ է իրականացնել անտառի վրա ճնշման կրճատման միջոցառումներ: Անտառտարածքներից հեռացնել ապօրինի շինությունները, կատարել ուսումնասիրություն ցանկապատված տարածքների օրինականությունը պարզելու համար:

Կոտայքի անտառներում բացի փայտանյութից կան նաև մեծ քանակությամբ պտղատու ծառեր ու թփուտներ, որոնց պտուղները կարելի է օգտագործել պահածոների, հյութերի, դեղաբույսերի արտադրություն կազմակերպելու համար:

Անտառների, որոշակի չափով նաև բուժիչ հանքային ջրերի, պատմամշակութային հուշարձանների, ռելիեֆի այս ձևավորված ամբողջությունը վկայում է մարզում առողջարաններ հիմնելու, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու մեծ ներուժի մասին:

Անտառի պահպանության հարցերում անհրաժեշտ է համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեություն:

Մարզում իրականացնել էկոտուրիզմի զարգացման համար խրախուսական միջոցառումներ, հնարավորություն ստեղծել օրգանական գյուղատնտեսության և էկոլոգիապես մաքուր արտադրանքի իրացման համար, որը կնպաստի մարզի էկոհամակարգերի պահպանությանը: Համայնքներում իրականացնել էներգախնայող նորագույն մեթոդների ներդրման քաղաքականություն:

Ավելի արդյունավետ դարցնել ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների և Օրհուս կենտրոնի համատեղ գործունեությունը, համագործակցել մարզում գործող երկու հեռուստաընկերությունների և ԶԼՄ-ների հետ՝ գործունեությունը ավելի թափանցիկ դարցնելու համար:

Ընդերք, բնական ռեսուրսներ

Հանքօգտագործման իրավունք ունեցողների կողմից սահմանված չափով հատկացումներ են կատարվում շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին, սակայն մինչև օրս որևէ տեղամասում չեն իրականացվել ռեկուլտիվացիոն

աշխատանքներ, անհրաժեշտ է կատարել մասնագիտական գնահատում՝ որոշելու համար ռեկուլտիվացիոն աշխատանքների անհրաժեշտ գումարի չափը և ներկայացնել կառավարությանը: ՇՄԱԳ գործընթացը դարցնել ավելի թափանցիկ և ապահովել հասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, Օրհուս կենտրոնի հետ համատեղ իրազեկել բնակչությանը համայնքում իրկանացվող ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ:

Բնապահպանական վճարների դրույքաչափերի ավելացում՝ շրջակա միջավայրն աղտոտող կազմակերպությունների մոտ աղտոտման ծավալների նվազեցման գծով վարքագծի փոփոխման խթանների ստեղծման, ինչպես նաև մարզում բնապահպանական ծրագրեր իրականացնելու և էկոհամակարգի պահպանության համար: Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ակտիվացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության աստիճանի բարձրացում՝ մարզում գործող Օրհուս կենտրոնների ներուժը օգտագործելով: Վերահսկել ընդերքի արդյունահանման փաստաթղթային օրինականությունը և պայմանագրային կետերի կատարումը:

Թափոնների կառավարում

Թափոնների հեռացման համակարգի բարելավման համար անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերում նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում: Մարզի վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացմանը ուղղված միջոցառումների կազմակերպում:

Աջակցել մարզում նախատեսվող կոշտ թափոնների կառավարման ծրագրի իրականացմանը, Հրազդանի Օրհուս կենտրոնի հետ համատեղ իրականացնել ծրագրի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, մարզում գործող կրթական հաստատություններում անցկացնել էկոկրթական դասընթացներ և կազմակերպել աղբահեռացման միջոցառումներ կրթական հաստատություններին հարակից տարածքներում, ավելացնել աղբամաները:

Հողային ռեսուրսներ

Մարզի բնակլիմայական պայմանները և Երևան քաղաքին մոտ գտնվելը էապես նպաստում է հողի բերրի շերտի անօրինական տեղափոխումներին, անհրաժեշտ է իրականացնել մարզից հողի բերրի շերտի տեղափոխման գործում առկա անօրինականությունների վերացման ուղղությամբ միջոցառումներ:

Հողի բերրի շերտի վերարտադրության և պահպանության համար իրականացնել կանաչապատման աշխատանքներ, մարզում գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար կազմակերպել դասընթացներ օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ, որը հնարավորություն կտա կրճատելու պարարտանյութերի ու թունաքիմիկատների չվերահսկվող օգտագործումը: Արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարում իրականացնել, ինչպես նաև արգելել գյուղացիներին այրել արոտավայրերը և ցանքատարածությունները:

Կատարել աղտոտված, դեգրադացված հողերի վերականգնման և մոնիտորինգային ծրագրերի իրականացում, ինչը հիմք կհանդիսանա մարզում դեգրադացիայի ենթարկված հողատարածքների ուսումնասիրության, կենսաբանական վերակուլտիվացման ուղղությունների մշակման և մոնիտորինգային ցանցի ստեղծման համար, իրականացնել հակաէռոզիոն, հակասողանքային, մելիորատիվ և խախտված հողերի վերականգնման միջոցառումներ:

Համանյքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացը դարցնել ավելի թափանցիկ՝ որոշումների կայացման գործընթացին հասրակության մասնակցության ինստիտուտը ներդնելով:

Ջրային Ավազան

Մարզի բնապահպանական հիմնախնդիրներից է կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքների կազմակերպումը այդ առումով անհրաժեշտ է Հանքավան – Հրազդան կոյուղատար կոլեկտորի վերանորոգումը, Ծաղկաձոր քաղաքի կոյուղատարի կառուցման ավարտումը: Մարզի առողջապահական և հանգստի գոտիներում գետերի և վտակների անաղարտ պահելու միջոցառումների իրականացում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել հանգստյան գոտիներում գտնվող հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման աշխատանքներ՝ կառուցելով ժամանակակից լոկալ մաքրման կենսաբանական կայաններ: Օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա կատարել մի շարք բնապահպանական վերլուծություններ: Մարզում ներդնել կաթիլային ոռոգման համակարգը, որը հնարավորություն կտա կրճատելու ջրի կորստի մեծ մասը և խմելու ջրի ապօրինի օգտագործումը, ինչը կնպաստի ոռոգման համակարգերի վերականգնմանը:

Նոյեմբերի 21-23-ը Վիեննայում տեղի ունեցավ Օրհուս կենտրոնների 2016թ. տարեկան հանդիպումը: Օրակարգում Կայուն զարգացման 2030 փաստաթղթի իրականացման համատեքստում Օրհուս կենտրոնների դերի քննարկումն էր և անելիքների ուրվագծումը: Հրազդան Օրհուս կենտրոնի համակարգող Ժորա Առաքելյանը ներկայացրեց շնորհանդես՝ “Օրհուս կենտրոնների ներգրավվածությունը՝ Հայաստանի կանաչ տնտեսության անցման գործընթացում” վերնագրով: Նեկայացվեց Հրազդանի Օրհուս կենտրոնի, ինչպես նաև

բոլոր Օրհուս կենտրոնների հաջողված փորձը կանաչ տնտեսության խթանման և ծրագրերի իրականացման վերաբերյալ:



Նոյեմբերի 23-ին մասնակիցներին հնարավորություն ընձեռնվեց ծանոթանալու Վիեննայի աղբի կառավարման համակարգին՝ որպես ռեսուրսների արդյունավետ օգտագործման օրինակելի փորձ: Մասնակիցները այցելեցին աղբի տեսակավորման և այրման գործարան, որտեղ մանրամասն ներկայացվեց ամբողջ ցիկլը՝ մասնակիցները տեղեկացան, որ Վիեննայում մասամբ իրականացվում է աղբի տեսակավորված հավաքագրում, աղբի տեսակավորված հավաքագրում: Իսկ չտեսակավորված աղբն այրվում է հատուկ տեխնոլոգիայով, որի արդյունքում անջատված ջերմային էներգիան ուղղվում է Վիեննայի բնակելի շենքերի մեծ մասի ջեռուցմանը, ինչպես նաև արտադրվում է բիոգազ, էլեկտրաէներգիա, շինարրական հումք:

Դեկտեմբերի 2-ին համակարգողը մասնակցեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի նախաձեռնած, ՀՀ բնապահպանության նախարարության և «Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ-ի համագործակցությամբ տեղի ունեցած աշխատաժողովին՝ նվիրված ազգային օրենսդրությունում Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթների արտացոլմանը և այդ համատեքստում շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիությանը:



Արդյունքներ`

Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգող Ժորա Առաքելյանը ընդգրկվել է Կոտայքի Մարզի Սոցիալ-Տնտեսական Զարգացման Ծրագրի բնապահպանական մասի պատրաստման աշխատանքային խմբի կազմում: Համակարգողի ներկայացված առաջարկությունները ներառվել են Սոցիալ-Տնտեսական Զարգացման Ծրագրի մեջ:

Համակարգողի նախաձեռնել է և մասնակցել մի քանի հանրային քննարկումների, որի արդյունքում ծրագրի ղեկավար խորհուրդը որոշում կայացրեց, որ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցից 7100 տոննա կայուն օրգանական աղտոտիչներով աղտոտված հողը չի տեղափոխվելու: Հրազդան քաղաքում նախատեսվող պահեստարան, այլ վնասազերծվելու է տեղում:

Համակարգողը ներկայացրել է Հայաստանի Օրհուս կենտրոնների լավագույն փորձը Վիեննայում Օրհուս կենտրոնների 2016թ. տարեկան հանդիպմանը:

Օգտագործված գրականության ցանկ`

ՀՀ բնապահպանության նախարարություն- (mnp.am)

Հայէկոմոնիտորինգ ՊՈԱԿ- armmonitoring.am

Կոտայքի մարզպետարան- kotayk.mtad.am

aravot.am

aarhus.am

ԵԱՀԿ փորձագետ՝ Ժորա Առաքելյան